ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն

Գերմանական համագործակցություն DEUTSCHE ZUSAMMENARBEIT

Implemented by giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

Swiss Agency for Development and Cooperation SDC

USAID FROM THE AMERICAN PEOPLE

Հայաստանի Հանրապետության 2017թ. խոշորացվող համայնքների նկարագրություն

ԱԼԱԳՅԱԶ
համայնք

(Ալագյազ, Ավշեն, Կանիաշիր, Ճարճակիս, Միջնատուն, Միրաք, Շենկանի, Ջամշլու, Ռյա Թազա, Սադունց և Սիփան բնակավայրեր)

Հեղինակ՝ Սարգիս Թովմասյան

Երևան – 2017

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔ

Ալագյազ խոշորացվող համայնքի կազմում ընդգրկվում են Ալագյազ (համայնքի կենտրոն), Ավշեն, Կանիաշիր, Ճարճակիս, Միջնատուն, Միրաք, Շենկանի, Ջամշլու, Ռյա Թազա, Սադունց և Սիփան գյուղերը: Նշված համայնքի կազմավորման առանցքային սկզբունք է դիտարկված գերազանցապես եզդի ազգաբնակչություն ունեցող բնակավայրերի համախմբումը, ինչը թույլ կտա պահպանել ազգային ինքնությունը, մշակույթը և սովորությունները, միաժամանակ նախադրյալներ կստեղծի բնակավայրերի միջև սոցիալական կապերի ամրապնդման, զարգացման միասնական ծրագրերի մշակման և իրականացման համար:

Համայնքի հաշվառված բնակչությունը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 4510 մարդ: Վարչական տարածքը կազմում է 12648 հա:

<u>Փնջի ընդհանուր նկարագիրը</u>

Համայնքի գյուղերը տեղաբաշխված են Արագածոտնի մարզի հյուսիսային հատվածում՝ Արագած լեռան հյուսիսային լանջերի և Փամբակի լեռների միջև ընկած սարավանդում: Տարածաշրջանի բոլոր բնակավայրերը բարձրլեռնային են (ծովի մակերևույթից ավելի քան 2000մ բարձրության վրա): Ըստ այդմ, ձմեռները տևական են, կայուն ձնածածկույթով և -6-8°c միջին ջերմաստիճանով, ամառները՝ համեմատաբար մեղմ և բարեխառն կլիմայով, 16-18°c միջին ջերմաստիճանով: Բնական լանդշաֆտները հիմնականում սևահողային տափաստաններ են:

Բնակչության զբաղվածության հիմնական ուղղություններն են անասնապահությունը, ինչպես նաև բանջարաբոստանային, հացահատիկային ու կերային կուլտուրաների մշակումը: Տարածաշրջանում գործնականում բացակայում են արտադրական կարողությունները, բացառություն է կազմում Սադունցում գործող պանրի գործարանը:

Արագածոտնի մարզպետարանի կայքում՝ համայնքներին առնչվող տեղեկատվության մեջ բոլոր համայնքներում առկա հիմնախնդիրներից կարևորված են հատկապես խմելու և ոռոգման ջրագծերի և գյուղամիջյան ճանապարհների նորոգումը:

Տարածաշրջանում քաղաքային բնակավայրի կամ տարաբնակեցման համակարգի տեղային կենտրոնի բացակայությունը բացասաբար է անդրադառնում հանրային ծառայությունների հասանելիության վրա:

Ալագյազ համայնքի փնջերի համադրում «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգով» սահմանված՝ խոշոր համայնքի տեսլականի պայմանների և խոշորացման չափորոշիչների հետ

<u>1. Տեսլականով սահմանված՝ բավարար մարդկային ռեսուրսների պայման և խոշորացման չափորոշիչներից՝ առնվազն 3000 բնակիչ ունեցող համայնքի կենտրոնի առկայություն.</u>

Քանի որ տվյալ պարագայում խոշորացման հիմքում դրված է ազգային փոքրամասնություններով բնակեցված բնակավայրերը միավորելու չափորոշիչը, համայնքի կենտրոնին ներկայացվող՝ բնակչության նվազագույն թվաքանակի պահանջը չի կարող պահպանվել, նկատի ունենալով, որ համայնքի կազմում ընդգրկվող ամենամեծ բնակավայրի՝

Ճարճակիսի բնակչության թվաքանակը կազմում է 721 մարդ: Սակայն, հաշվի առնելով բնակավայրերի աշխարհագրական դիրքը, ավելի նպատակահարմար է որպես համայնքի կենտրոն նախատեսել տարածաշրջանում կենտրոնական դիրք զբաղեցնող Ալագյազ գյուղը, որը միաժամանակ տեղաբաշխված է Մ3 միջպետական և Հ23 հանրապետական նշանակության ավտոմայրուղիների խաչմերուկում:

Համայնքի կազմում ընդգրկված բոլոր գյուղերի բնակչությունը 2001-2016 թվականներին աճել է (բացառությամբ Սադունցի), ընդ որում, առավելագույն աճն արձանագրվել է Միջնատուն գյուղում (72 տոկոս), նվազագույնը՝ Սիփանում (14 տոկոս), իսկ բոլոր գյուղերի ընդհանուր բնակչության աճը կազմել է 39 տոկոս (Աղյուսակ 1), ինչը բացառիկ երևույթ կարելի է համարել:

Բնակչության խտության միջինացված ցուցանիշը՝ 36մարդ/քառ.կմ, միայն պայմանականորեն կարելի է բավարար համարել, քանի որ այն ավելի քան 3 անգամ փոքր է հանրապետության միջին ցուցանիշից: Բացի այդ, ներկայիս Միջնատուն և Միրաք համայնքներում բնակչության խտության ցուցանիշները (համապատասխանաբար 17 և 10 մարդ/քառ.կմ) ավելի պակաս են բարենպաստ կենսամիջավայրին բնորոշ նվազագույն ցուցանիշից:

Աղյուսակ 1. Ալագյազ խոշորացվող համայնքի բնակչության շարժընթացը և խտությունը

	Համայնք	Նախկին վարչական տարածքը /հա/	Հաշվառված բնակչություն		բնակչ.փոփոխութ. Տոկոս	Բնակչության խտությունը/մարդ/քառ.կմ
			2001 թ.	2016 թ.		
1	2	3	4	5	6	7
1	Ալագյազ	814	469	573	122	70
2	Ավշեն	1470	277	469	169	32
3	Կանիաշիր	387	345	465	135	120
4	Ճարճակիս	2317	470	721	153	31
5	Միջնատուն	1843	178	307	172	17
6	Միրաք	1367	90	135	150	10
7	Շենկանի	793	192	284	148	36
8	Ջամշլու	901	227	291	128	32
9	Ռյա Թազա	911	443	692	156	76
10	Սադունց	669	293	271	92	41
11	Սիփան	1176	264	302	114	26
	Ընդամենը/միջինը/	12648	3248	4510	139	36

2. Տեսլականով սահմանված՝ բավարար բնական ռեսուրսներով ապահովված լինելու պայման

Ալագյազ համայնքի կազմում ներառվող նախկին համայնքներից պետական սեփականության գյուղատնտեսական հողեր առկա են միայն Սադունց համայնքում՝ 693,4հա:

Մասնավոր և համայնքային սեփականության գյուղատնտեսական հողերի գերակշիռ մեծամասնությունը վարելահողեր են, որոնք օգտագործվում են բանջարաբոստանային, հացահատիկային և կերային մշակաբույսերի աճեցման համար: Կան նաև արոտներ և խոտհարքներ: 1 բնակչի հաշվով մասնավոր սեփականության հողերի ամենամեծ ծավալները նախկին Սադունց համայնքում են (1,87 հա), համայնքային սեփականության հողերինը, ինչպես նաև մասնավոր և համայնքային սեփականության հողերի գումարային ծավալները՝ նախկին Միրաք համայնքում (համապատասխանաբար 7,83 և 9,07հա):

Խոշորացվող Ալագյազ համայնքում մասնավոր սեփականության գյուղատնտեսական հողերը մեկ բնակչի հաշվով կազմում են 0,78 հա, համայնքային սեփականության հողերը՝ 1,64 հա (Աղյուսակ 2), այսինքն դրանց գումարը մոտ 3 անգամ ավել է, քան հանրապետության միջին ցուցանիշը, ինչը շոշափելի դրական գործոն է:

Աղյուսակ 2. Գյուղատնտեսական, հատուկ պահպանվող տարածքների, անտառային և արդյունաբերական նշանակության հողերը Ալագյազ խոշորացվող համայնքում

	Համայնք	Հաշվառված բնակչություն 2016	Գյուղատնտեսական հողեր/հա/					Հատուկ պահպանվող տարածքներ	Անտառային	Արդյունաբերության, Ընդերքօգտագործման և այլ նշանակության
			Քաղաքացիների սեփականություն	Համայնքի սեփականություն	1 բնակչի հաշվով					
					Քաղաքացիների սեփականություն	Համայնքի սեփականություն	Ընդամենը			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	Ալագյազ	573	377,3	251,5	0,66	0,44	1,10	7,3	76,7	7,3
2	Ավշեն	469	236,9	1127,5	0,51	2,40	2,91	1,8	41,6	4,4
3	Կանիաշիր	465	263,8	65,0	0,57	0,14	0,71	1,8	0,0	6,1
4	Ճարճակիս	721	597,4	1242,8	0,83	1,72	2,55	11,2	374,0	7,1
5	Միջնատուն	307	215,6	1451,9	0,70	4,73	5,43	2,2	130,1	0,7
6	Միրաք	135	167,2	1057,2	1,24	7,83	9,07	10,6	53,3	2,5
7	Շենկանի	284	131,8	589,4	0,46	2,08	2,54	2,6	2,4	6,1
8	Ջամշլու	291	434,5	346,0	1,49	1,19	2,68	2,5	52,9	7,3
9	Ռյա Թազա	692	446,0	334,0	0,64	0,48	1,13	44,0	0,0	6,5
10	Սադունց	271	506,8	109,9	1,87	0,41	2,28	44,0	0,0	6,5
10	Սիփան	302	149,1	837,8	0,49	2,77	3,27	4,0	125,5	4,2
	Ընդամ/միջին	4510	3526,2	7412,8	0,78	1,64	2,43	90,2	856,4	58,7

Ալագյազ համայնքում առկա են նաև անտառային նշանակության հողեր, որոնց ավելի քան 70 տոկոսը գտնվում է նախկին Ճարճակիս, Միջնատուն և Սիփան համայնքների տարածքներում՝ Փամբակի լեռնալանջերին:

Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերը Ալագյազ բնակավայրում կազմում են 7,3 հա: Բացի այդ, Ալագյազի բնակավայրերի հողերի կազմում առկա են 5,3 հա կազմող այլ գործառնական նշանակության հողեր, որոնք նույնպես կարող են օգտագործվել արտադրական նպատակներով, ինչպես նաև հասարակական կառուցապատման և ընդհանուր օգտագործման տարածքների ընդլայնման նպատակով, ինչի կարիքն առկա է բնակավայրում:

<u>3. Համայնքների խոշորացման փեսլականով սահմանված՝ բավարար ֆինանսական ռեսուրսներ ունենալու պայման</u>

Երեք տարվա (2013-2015 թ.թ.) միջինացված ցուցանիշով, սեփական եկամուտները հանրապետական միջինից ցածր են եղել նախկին Շենկանի, Կանիաշիր, Ավշեն, Ռյա Թազա, Միջնատուն, Սիփան և Ճարճակիս համայնքներում, հանրապետական միջինից բարձր՝ Միրաք, Ջամշլու, Սադունց և Ալագյազ համայնքներում (Աղյուսակ 3): Խոշորացվող համայնքի կտրվածքով մեկ բնակչի հաշվով սեփական եկամուտները կազմել են 7,8 հազար դրամ, ինչը 0,5 հազար դրամով ավել է հանրապետական միջին ցուցանիշից: Դրական գործոն կարելի է համարել այն հանգամանքը, որ ներկայիս Ալագյազ համայնքում այն մոտ 2 հազար դրամով ավել է հանրապետության միջին ցուցանիշից:

Աղյուսակ 3. Սեփական եկամուտների ծավալները Ալագյազ համայնքում

	Համայնք	Հաշվառված բնակչություն 2016թ.	Սեփական եկամուտներ	
			2013-2015թ.թ. տարեկան միջին /հազ.դրամ	1 բնակչի հաշվով
1	2	3	4	5
1	Ալագյազ	573	5272	9,2
2	Ավշեն	469	2370	5,1
3	Կանիաշիր	465	2208	4,7
4	Ճարճակիս	721	5063	7,0
5	Միջնատուն	307	1885	6,1
6	Միրաք	135	1978	14,7
7	Շենկանի	284	1111	3,9
8	Ջամշլու	291	3133	10,8
9	Ռյա Թազա	692	3975	5,7
10	Սադունց	271	3146	11,6
11	Սիփան	302	2077	6,9
	Ընդամենը/միջինը/	4510	2928,9	7,8

4. Բնակավայրերի և համայնքի կենտրոնի միջև տրանսպորտային կապերը և ավտոմոբիլային ճանապարհների վիճակը

Քանի որ տարածաշրջանում չկա համայնքների խոշորացման չափանիշներին համապատասխան բնակչության թիվ ունեցող բնակավայր, տրանսպորտային կապերի գնահատականը տրված է ներկայումս մինչև մոտակա քաղաք (հանրային ծառայությունների ամբողջական շրջանակի հասանելիություն) և նոր ձևավորվող համայնքի կենտրոն հասնելու համար ծախսվող ժամանակի համեմատության հիման վրա:

Նկատի ունենալով տարածաշրջանի բնակլիմայական պայմանները, խնդրո առարկա տարածություններն անցնելու համար անհրաժեշտ ժամանակի նկատմամբ կիրառվել է 1,2 գործակից:

4-րդ աղյուսակում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ Ալագյազ բնակավայրում համայնքի կենտրոնի (հանրային ծառայությունների) գործառույթների իրականացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների ձևավորման պարագայում 7 բնակավայր կարող են գտնվել բարենպաստ հասանելիության, 3-ը՝ սահմանափակ հասանելիության տիրույթում, մինչդեռ ներկայումս բարենպաստ հասանելիության տիրույթում 4 բնակավայր է: Հարկ է նկատել, որ երկու տարբերակում էլ հասանելիության անբարենպաստ տիրույթում չկա որևէ բնակավայր:

Աղյուսակ 4. Տրանսպորտային կապերի և ավտոճանապարհների վիճակը Ալագյազ համայնքում

	Համայնք	Բարձրությունը ծովի մակերևույթից	Հեռավորութ. մոտակա քաղաքից		Հասանելիություն	Հեռավորութ. համայնքի կենտրոնից		Հասանելիություն	Ճանապարհի վիճակը
			կմ	րոպե		կմ	րոպե		
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	Ալագյազ	2050	14,4	12	Բ*	49,2**	61,2	-	Բավարար
2	Ավշեն	2150	25,2	21	ՍԲ	5,3	14,4	Բ	Հիմնանորոգ.
3	Կանիաշիր	2070	20,4	17	ՍԲ	5,1	6	Բ	Բավարար
4	Ճարճակիս	2180	25,2	21	ՍԲ	5,3	13,2	Բ	Հիմնանորոգ.
5	Միջնատուն	2100	33,6	28	ՍԲ	8,3	21,6	ՍԲ	Հիմնանորոգ.
6	Միրաք	2025	14,4	12	Բ	10,3	15,6	ՍԲ	Ընթաց.նորոգ.
7	Շենկանի	2135	16,8	14	Բ	6,4	18	ՍԲ	Հիմնանորոգ.
8	Ջամշլու	2050	18	15	ՍԲ	2,3	4,8	Բ	Բավարար
9	Ռյա Թազա	2040	13,2	11	Բ	2,9	4,8	Բ	Բավարար
10	Սադունց	2100	21	22,8	ՍԲ	8,7	8,4	Բ	Բավարար
11	Սիփան	2100	24	20	ՍԲ	4,8	12	Բ	Հիմնանորոգ.

**Բ-Բարենպաստ, ՍԲ-սահմանափակ բարենպաստ*

***համայնքի կենտրոնի հեռավորությունը մարզկենտրոնից,*

Հարկ է նշել նաև, որ Ավշեն, Ճարճակիս, Միջնատուն, Շենկանի և Սիփան գյուղերը Ալագյազին կապող ճանապարհները հիմնանորոգման կարիք ունեն, Միրաք գյուղինը՝

ընթացիկ նորոգման, իսկ Կանիաշիր, Ջամշլու, Սադունց և Ռյա Թազա գյուղերով անցնում են միջպետական և հանրապետական նշանակության մայրուղիներ, որոնց վիճակը բավարար է:

5. Կրթական, առողջապահության և մշակութային ենթակառուցվածքներ

Ալագյազ համայնքի կազմում ընդգրկված ոչ մի բնակավայրում մանկապարտեզ չկա:

Հիմնական դպրոցներ ունեն Ավշեն (50 տեղ, 33 աշակերտ), Կանիաշիր (150 տեղ, 32 աշակերտ), Միջնատուն (45 տեղ, 45 աշակերտ), Միրաք (50 տեղ, 17 աշակերտ), Ջամշլու (50 տեղ, 36 աշակերտ) և Սադունց (100տեղ, 25 աշակերտ) բնակավայրերը:

Միջնակարգ դպրոց ունեն Ալագյազ (150 տեղ, 73 աշակերտ), Ճարճակիս (130 տեղ,86 աշակերտ), Ռյա Թազա (190 տեղ, 102 աշակերտ) և Սիփան (70 տեղ, 28 աշակերտ) գյուղերը:

Մշակույթի տուն ունեն Ավշեն (200 տեղ) և Սադունց (100 տեղ) գյուղերը:

Երաժշտական, գեղարվեստի, արվեստի, սպորտային դպրոց չկա ոչ մի գյուղում:

Առողջապահական հաստատություններից՝ բուժկետեր ունեն Ալագյազ (վիճակը՝ բավարար), Ավշեն (համայնքապետարանի շենքում), Ճարճակիս (վագոն-տնակում) և Միջնատուն գյուղերը:

Ենթակառուցվածքների տեղաբաշխումը բնակավայրերում ներկայացված է տորև բերված քարտեզի վրա:

Ալագյազ համայնքում ենթակառուցվածքների փեղաբաշխման սխեմա



Հապավումներ.-ՀԴ-հիմնական դպրոց, ՄԴ-միջնակարգ դպրոց, ԲԿ-բուժկետ, ՄՏ-մշակույթի տուն

Համայնքների խոշորացման պայմանների և չափորոշիչների ամփոփ պատկերը Ալագյազ համայնքի պարագայում ներկայացված է 5-րդ աղյուսակում:

Աղյուսակ 5. Ալագյազ համայնքի խոշորացման պայմանների և չափորոշիչների ամփոփ գնահատական

	Խոշորացման պայմաններ և չափորոշիչներ	**Ցուցանիշի գնահատական**	**Ծանոթություն**
1	Բավարար մարդկային ռեսուրսներ և առնվազն 3000 բնակիչ ունեցող համայնքի կենտրոն	Բավարար չէ	Առանցքային սկզբունք է դիտարկված ազգ. փոքրամասնությամբ բնակավայրերի համախմբումը
2	Բավարար բնական (հողային) ռեսուրսների առկայություն	Բավարար է՝ մոտ 3 անգամ ավել հանրապետության միջին ցուցանիշից	
3	Ֆինանսական ռեսուրսների առկայություն	Բավարար է՝ հանրապետության միջին ցուցանիշին համարժեք	
4	Տրանսպորտային կապեր	Բավարար է՝ հասանելիության անբարենպաստ տիրույթում գտնվող գյուղեր չկան	
5	Ավտոճանապարհների վիճակ	Հիմնականում բավարար է	Որոշ հատվածներում ընթացիկ կամ հիմնանորոգման կարիք կա
6	Նախադպրոցական հիմնարկներ	Բավարար չէ	
7	Կրթական հաստատություններ	Բավարար է	Առանձին դպրոցներ ընթացիկ կամ հիմնանորոգման կարիք ունեն
8	Առողջապահության օբյեկտներ	Բավարար չէ	Անհրաժեշտ է Ալագյազ գյուղում ամբուլատորիա կամ հիվանդանոց կառուցել
9	Մշակութային օբյեկտներ	Բավարար չէ	Անհրաժեշտ է Ալագյազ գյուղում կառուցել մարզամշակութային կենտրոն
10	Ընդհանուր սահմանի առկայություն	Առկա են	
11	Համայնքի կենտրոնի կենտրոնական դիրք	Բավարար է	
12	Բնակիչների համատեղելիություն և մենթալություն	Բավարար է	

Այսպիսով, ընտրված 12 պայմաններից և չափորոշիչներից Ալագյազ խոշորացված համայնքը բավարարում է 7-ին:

Հիմնական շեղումներն են՝

➢ համայնքի կենտրոնի բնակչության անբավարար թիվը, ինչը պայմանավորված է ազգային փոքրամասնություններով բնակեցված բնակավայրերի համախմբման գործոնով և տարածաշրջանում նշված չափորոշիչին բավարարող բնակավայրի բացակայությամբ,

➢ Ենթակառուցվածքների, մասնավորապես, մշակութային և առողջապահության օբյեկտների բացակայությունը:

Որպես առկա շեղումները չեզոքացնելու և խոշորացված համայնքի զարգացմանը նպաստող հիմնական միջոցառումներ պետք է դիտարկել՝

➢ Խոշորացվող համայնքի կենտրոն Ալագյազում ամբուլատորիայի (հիվանդանոցի) և մարզամշակութային կենտրոնի կառուցումը,

➢ Ալագյազում ծառայողական բնակֆոնդի ստեղծումը՝ հրավիրված կամ մրցույթով ընտրված մասնագիտական կադրերի (բուժ.աշխատողներ, ուսուցիչներ և այլն) բնակարանային ապահովության խնդիրը լուծելու համար,

➢ Ալագյազ խոշորացված համայնքի տարածքային զարգացման նախագծի մշակումը,

➢ Միջբնակավայրային ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ և հիմնանորոգման աշխատանքների իրականացումը,

➢ Աճեցված բերքի, ինչպես նաև կաթնամթերքի իրացման կարողությունների ձևավորումը:

Ալագյազ համայնքի կազմավորումը կարող է ապահովել համայնքների խոշորացման հայեցակարգում ամրագրված հետևյալ հիմնական արդյունքները՝

1. Մարդկային ռեսուրսների համախմբումը, ինչը թույլ կտա բարձրացնել համայնքի կառավարման արդյունավետությունը (որակյալ կադրեր, ընդլայնված կառավարման օբյեկտ, և այլն),

2. Ենթակառուցվածքների համախմբումը և ծառայությունների մատուցման արդյունավետության բարձրացումը, ինչը թույլ կտա կենտրոնացնել փոշիացած ռեսուրսները և դրանց կառավարումն իրականացնել մեկ կենտրոնից, մշակել և իրականացնել համայնքային քաղաքականություն, որը փոքր համայնքներից շատերում բացակայում է,

3. Միավոր ծառայության վրա կատարվող ծախսերի նվազեցումը և ծառայությունների շրջանակի ընդլայնումը,

4. Ենթակառուցվածքների գծով կապիտալ ներդրման գումարների առավել նպատակային և կենտրոնացված օգտագործումը,

5. Համապետական ծրագրերի իրականացման հնարավորությունների մեծացումը,

6. Տնտեսության ճյուղերի՝ հատկապես գյուղատնտեսության զարգացման համար ավելի մեծ հնարավորությունների ստեղծումը,

7. Բնական պաշարների հասանելիությունը և դրանցից օգտվելու հնարավորության ապահովումը գործնականում բոլոր բնակավայրերի բնակիչների համար,

Վերը թվարկվածից բացի, Ալագյազ համայնքի կազմավորումը թույլ կտա նաև՝

- միավորել հիմնականում եզդի ազգաբնակչություն ունեցող գյուղերի ներուժը, ինչը կնպաստի մշակութային ինքնության պահպանությանը, բնակավայրերի միջև սոցիալական կապերի, ինչպես նաև էթնոտուրիզմի զարգացմանը,
- Արագածոտնի մարզի հյուսիս-արևմտյան հատվածում կազմավորել տարաբնակեցման համակարգի նոր տեղային կենտրոն՝ որպես զարգացման բազմակենտրոն համակարգի պակասող օղակներից մեկի լրացում, ինչն իր հերթին կնպաստի տարածքների համաչափ զարգացմանը:

Սույն զեկույցը լույս է տեսնում Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության, Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (ՇԶՀԳ) և ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) ցուցաբերած աջակցության շնորհիվ:

Հրատարակության մեջ առկա տեսակետների պատասխանատվությունը կրում են հեղինակները և չեն արտացոլում Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության, ՇԶՀԳ և ԱՄՆ ՄԶԳ-ի և համապատասխան կառավարությունների դիրքորոշումները:

Հրապարակված է

Գերմանիայի միջազգային համագործակցության
ընկերության (ԳՄՀԸ) կողմից
Ընկերության գլխամասային գրասենյակներ՝
Բոնն և Էշբորն, Գերմանիա

ԳՄՀԸ «Լավ տեղական ինքնակառավարում Հարավային Կովկասում» ծրագիր

Բաղրամյան պող. 4/1, 0019, Երևան
Հայաստանի Հանրապետություն
Հեռ.՝ +374 (0) 10 58 05 39; 58 93 00
Ֆաքս՝ +374 (0) 10 58 92 70
Կայք՝ www.giz.de